ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 3

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Մխչյանի 1-ին աստիճանի պոմպակայանի մոտեցնող ջրանցքի գլխամասում շահագործման տնակի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի անհրամապատասխանությունների շտկման նիստի

ք. Երևան

14 հուլիսի 2022թ.
ժամը. 15:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Մ. Թումանյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Հ.Նոնինյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Բ.Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
	Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Ռաթևոսյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

Ընդունել ի գիտություն՝

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է անճշտության՝ Դիմում-հայտարարության մեջ տեղի ունեցած տեխնիկական վրիպակի՝ կազմակերպության անվանման մասին: «ՔՈ ՏՈՒՆԸ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է շտկված փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	«ՔՈ ՏՈՒՆԸ» ՍՊԸ	1 750 000	1 750 000
2	«Գևորգ Գևորգյան» Ա/Ձ	1 750 000	1 750 000

1.5 Հայտերի գնահատման մասին

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գնահատող հանձնաժողովը որոշեց ընկերությունների ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ հոդվածի 5-րդ կետի բ) ենթակետի պահանջները՝ նիստը կասեցնել և բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակցների բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Մ. Թումանյան

_____ Հ. Նոնինյան

_____ Բ. Եդիգարյան

_____ Գ. Խոսրովյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Ռաթևոսյան